ԿՌԿ սեռական շահագործումից և չարաշահումից պաշտպանության քաղաքականություն[1]

---

1. Նպատակը

Կանանց ռեսուրսների կենտրոնը (ԿՌԿ) պարտավորվում է ստեղծել և պահպանել անվտանգ միջավայր, որտեղ բոլոր անհատներն արժանապատիվ և հարգալից վերաբերմունքի են արժանանում: Սույն քաղաքականությունը սահմանում է կազմակերպության դիրքորոշումը սեռական շահագործման և չարաշահման (ՍԾՉ) կանխարգելման վերաբերյալ և ապահովում է սույն քաղաքականության ցանկացած խախտմանն արձագանքման համար հստակ շրջանակ: Քաղաքականությունը մշակված է կանանց, աղջիկների և ԿՌԿ ծրագրերի այլ շահառուների իրավունքների և բարեկեցության ապահովման համար՝ երաշխավորելով նրանց անվտանգությունը ԿՌԿ աշխատակիցների, գործընկերների և այլ ասոցացված անձանց կողմից հնարավոր վնասներից:

2. Շրջանակը

Այս քաղաքականությունը տարածվում է բոլոր աշխատակիցների, կամավորների, պայմանագրային աշխատակիցների և ցանկացած այլ անձանց վրա, որոնք ներկայացնում կամ աշխատում են ԿՌԿ-ի հետ, ներառյալ գործընկեր կազմակերպությունները, խորհրդատուները և երրորդ կողմ կապալառուները (կատարողները): Այն կիրառելի է ինչպես կազմակերպության տարածքում, այնպես էլ բոլոր այլ վայրերում, որտեղ ԿՌԿ-ն իրականացնում է իր ծրագրերը:

3. Սեռական շահագործման և բռնության սահմանումը

Համաձայն միջազգային չափորոշիչների և ՄԱԿ-ի ՍԾՉ իրավական համակարգի, Սեռական շահագործումը և չարաշահումը վերաբերում է անձնակազմի կողմից ցանկացած գործողության կամ անգործության, որը համարվում է.

---

[1] Այս քաղաքականությունն ուժի մեջ է 01.09.2024-ից սկսած

- **Սեռական շահագործում**. խոցելի դիրքի, իշխանության անհավասարության կամ վստահության ցանկացած իրական կամ ենթադրյալ չարաշահում սեռական նպատակներով: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում, սեռական բնույթի ծառայության հայցումը, սեռական ոտնձգության ցանկացած ձև կամ ցանկացած գործարքային հարաբերություն, որում շահառուն հարկադրանքի է ենթարկվում կամ մանիպուլացվում:
- **Սեռական չարաշահում.** սեռական բնույթի ցանկացած իրական կամ ենթադրյալ ֆիզիկական միջամտություն, լինի դա ուժի կիրառմամբ, թե անհավասար կամ հարկադրական պայմաններում:

4. Ուղղորդող սկզբունքներ

ԿՌԿ-ն հավատարիմ է անվտանգության ապահովման միջազգային իրավական շրջանակների, ներառյալ Միավորված ազգերի միջգերատեսչական մշտական կոմիտեի սահմանած հիմնական սկզբունքներին՝ ուղղված ՍԾՉ-ի կանխմանն ու դրան արձագանքին.

- **Զրո հանդուրժողականություն.** ԿՌԿ-ն զրո հանդուրժողականության քաղաքականություն ունի սեռական շահագործման և չարաշահման նկատմամբ: Ցանկացած անձի նկատմամբ, ով կատարել է կամ պարզվում է, որ ներգրավված է եղել ՍԾՉ-ում, կկիրառվեն անհապաղ կարգապահական միջոցներ, ներառյալ աշխատանքից հնարավոր հեռացումը կամ ԿՌԿ-ի հետ պայմանագրային հարաբերությունների դադարեցումը:
- **Զոհակենտրոն մոտեցում.** ՍԾՉ-ի ցանկացած մեղադրանքի դեպքում ԿՌԿ-ի արձագանքն առաջնահերթություն կտա վերապրածների անվտանգությանը, արժանապատվությանը և բարեկեցությանը՝ ապահովելով, որ նրանք ստանան աջակցություն և խնամք:
- **Անչափահասների հետ սեռական ակտի արգելք**. 18 տարեկանը չլրացած ցանկացած անձի հետ սեռական որևէ գործողություն խստորեն արգելվում է՝ անկախ ներպետական օրենսդրական կարգավորումներից: Անձի տարիքի մասին տեղեկացվածության բացակայությունը չի արդարացնում կամ մեղմացնում այս խախտումը:
- **Սեռական ծառայության փոխանակում**. Ռեսուրսներ, աշխատանք, ապրանքներ կամ ծառայություններ առաջարկելը կամ դրանց տրամադրումը մերժելը սեռական ծառայությունների (բարեհաճությունների) դիմաց կամ ցանկացած այլ շահագործման նպատակով խստորեն արգելվում է: ԿՌԿ-ն անթույլատրելի է համարում իր շահառուների նկատմամբ ցանկացած նվաստացուցիչ կամ հարկադրական վարքագիծ:
- **Հարաբերություններում իշխանության չարաշահում.** աշխատակիցներին և կամավորներին արգելվում է սեռական հարաբերություններ ունենալ ԿՌԿ-ից ծառայություններ ստացող անձանց հետ, եթե այդ հարաբերությունները ենթադրում են իշխանության չարաշահում կամ կարող են հանգեցնել անձի շահագործման: Նման վարքագիծը խաթարում է ԿՌԿ-ի առաքելությանը:

- **Շահագործման վրա հիմնված հարաբերությունների արգելք.** ցանկացած հարաբերություն, որը կարող է շահագործել կամ վտանգել մեր ծառայությունից օգտվողների վստահությունը, խստորեն արգելվում է՝ անկախ ներգրավված անձանց տարիքից կամ դերից:
- **Պարտադիր հաղորդում.** ԿՌԿ-ի բոլոր աշխատակիցները և կամավորները պարտավոր են անհապաղ հաղորդել ՍԾՉ-ի ենթադրյալ կամ նկատելի դեպքերի մասին՝ հետևելով հաղորդման սահմանված ընթացակարգերին:
- **Ապահով միջավայրի ստեղծում.** բոլոր աշխատակիցները պատասխանատու են ՍԾՉ-ն ակտիվորեն կանխող ապահով միջավայրի խթանման համար: ԿՌԿ-ի տնօրենն ու համակարգողներն ունեն հատուկ պարտականություն՝ պահպանելու և խթանելու այս սկզբունքներն իրենց թիմերում:
- **Գաղտնիություն և հաշվեհարդարի բացառում**. ՍԾՉ-ի բոլոր հաղորդումները կդիտարկվեն գաղտնիության առավելագույն պահպանմամբ: Անընդունելի է որևէ հաշվեհարդարի կամ վրեժխնդրության դրսևորում ՍԾՉ-ի մասին հաղորդող անձանց նկատմամբ:
- **Հաշվետվողականություն.** ԿՌԿ-ն իր բոլոր աշխատակիցներին, կամավորներին և ասոցացված այլ անձանց պատասխանատվության կենթարկի այս քաղաքականության դրույթները խախտելու դեպքում:

5. Սեռական շահագործման և չարաշահման կանխարգելում

- **Աշխատակազմի վերապատրաստում.** բոլոր աշխատակիցները, կամավորները և գործընկերները կանցնեն պարտադիր վերապատրաստում ՍԾՉ-ի սկզբունքների, ՍԾՉ-ի բացահայտման և միջադեպերի մասին հաղորդելու կարգերի վերաբերյալ: Այս վերապատրաստումը կլինի աշխատանքի ընդունման գործընթացի մաս և պարբերաբար կկրկնվի:
- **Վարքագծի կանոններ**. բոլոր աշխատակիցներից և գործընկերներից կպահանջվի ստորագրել Վարքագծի կանոնները, որոնք հստակ արգելում են սեռական շահագործումը և չարաշահումն ու սահմանում են ակնկալվող վարքագիծը: Վարքագծի կանոնները պարբերաբար կվերանայվեն և կթարմացվեն:
- **Աշխատանքի ընդունման ապահով ընթացակարգեր**. ԿՌԿ-ն կկիրառի աշխատանքի ընդունման ապահով ընթացակարգեր, ներառյալ անցյալում անձի վարքագծի մասին տեղեկությունների ստուգումներ և երաշխավորագրերի հավաստումներ, որպեսզի ապահովի, որ կազմակերպության կողմից աշխատանքի վերցված կամ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձիք ունեն մասնագիտական բարեվարքության պատմություն:
- **Հաղորդման հստակ մեխանիզմներ.** ԿՌԿ-ն կստեղծի և կիրապարակի ՍԾՉ-ի մասին հաղորդելու հստակ, գաղտնի և մատչելի ուղիներ: Այս մեխանիզմները հասանելի կլինեն հայերենով և կապահովեն, որ տուժածներն իրենց հարմարավետ զգան հաղորդում ներկայացնելիս:

- **Համայնքի իրազեկում.** ԿՌԿ-ն կիրազեկի ծրագրի շահառուներին և համայնքներին այն մասին, թե ինչ է սեռական շահագործումը և չարաշահումը, և ինչպես անվտանգ հաղորդել մտահոգությունների մասին:

6. ՍԾՉ քաղաքականության ինտեգրումը ԿՌԿ-ի աշխատանքում

Մեր ՍԾՉ քաղաքականությանը հանձնառությունը ամրապնդելու համար ԿՌԿ-ն ինտեգրում է ՍԾՉ-ի կանխարգելումն իր պլանավորման, ծրագրավորման և ամենօրյա գործունեության մեջ՝ ապահովելով, որ ռիսկերի նվազեցման և արձագանքման միջոցները ներառված լինեն աշխատանքի բոլոր ոլորտներում.

- **Ռիսկերի գնահատում և նվազեցում.** բոլոր ծրագրերն ու գործողությունները ներառում են ՍԾՉ-ին ուղղված մանրամասն ռիսկերի գնահատում: Սա ներառում է առավելագույն ռիսկի տակ գտնվող խմբերի բացահայտումը և ակտիվ միջոցառումների կազմակերպումը, ներառյալ անվտանգության քարտեզագրումը և խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ, ինչպիսիք են տեղական իշխանությունները, կանայք և խոցելի խմբերը:
- **ՍԾՉ-զգայուն աշխատանքի ընդունման գործելակարգեր.** ներդնել ՍԾՉ-ի քաղաքականությանը համապատասխան աշխատանքի ընդունման գործելակարգեր՝ ապահովելու, որ բոլոր աշխատակիցները և կամավորներն անցնեն նախկին վարքագծի մասին տեղեկությունների ստուգումներ և երաշխավորագրերի հավաստումներ, ինչպես նաև ՍԾՉ պաշտպանության վերապատրաստում: Պայմանագրերը և աշխատանքի նկարագրությունները ներառում են ՍԾՉ-ի քաղաքականությամբ սահմանված պարտավորություններ, իսկ կատարողականի վերանայումները գնահատվում են նաև ՍԾՉ-ից պաշտպանվածության չափանիշներին համապատասխան:
- **Պայմանագրային պարտավորություններ գործընկերների համար.** գործընկերների, մատակարարների և այլ փոխկապակցված անձանց/կազմակերպությունների հետ ԿՌԿ-ի բոլոր պայմանագրերը ներառում են պարտադիր ՍԾՉ-ի կետ՝ պահանջելով լիակատար համապատասխանություն ԿՌԿ-ի ՍԾՉ-ի նկատմամբ զրո հանդուրժողականության մոտեցմանը: Գործընկերներից ակնկալվում է, որ նրանք կպահպանեն այս սկզբունքները և կիրականացնեն իրենց աշխատանքը՝ առաջնահերթություն տալով ներգրավված անձանց պաշտպանվածությանը:
- **Ամենամյա վերապատրաստման դասընթացներ**. ԿՌԿ-ն բոլոր աշխատակիցների, կամավորների և գործընկերների համար անցկացնում է ՍԾՉ-ի պարտադիր վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման բովանդակությունը ներառում է ՍԾՉ-ի ճանաչումը, հաղորդման մեխանիզմները և պաշտպանվածության կանոնները խախտելու հետևանքները:
- **Քաղաքականությանը և հաղորդման մեխանիզմներին հասանելիությունը.** ԿՌԿ-ն ապահովում է, որ բոլոր աշխատակիցները,

կամավորները և գործընկերներն ունենան հասանելիություն պաշտպանվածության քաղաքականությանը և ծանոթ լինեն հաղորդման մեխանիզմներին: Շեշտը դրվում է բողոքներ ներկայացնելու և միջադեպերի արձագանքման արձանագրությունները հասկանալու հստակ, մատչելի ուղիների վրա:

7. Հաղորդում և արձագանքում

ԿՌԿ-ն հանձնառու է ներդնելու հստակ, կառուցվածքային հաղորդման ընթացակարգեր, որպեսզի ապահովի, որ անվտանգության հետ կապված բոլոր դեպքերը դիտարկվեն հետևողականորեն, թափանցիկ և զգայուն մոտեցմամբ: Հետևյալ ընթացակարգերը սահմանում են միջադեպերի մասին հաղորդելու և դրանց արձագանքելու քայլերը, որոնք նախագծված են ապահովելու, որ ցանկացած բացահայտված միջադեպ անհապաղ և արդյունավետորեն լուծվի:

Հաղորդման գործընթացը ներառում է հինգ հիմնական քայլ՝ ապահովելով, որ յուրաքանչյուր դեպք քննվի պատշաճ կերպով, և վերապրածները ստանան անհրաժեշտ աջակցություն:

Քայլ 1. Նախնական բացահայտում

Հաղորդում կարող է ներկայացվել ԿՌԿ-ի հետ փոկապակցված ցանկացած անձի կողմից, ներառյալ վերապրածները, աշխատակիցները, կամավորները կամ վկաները: Հաղորդումները կարող են ներկայացվել ուղղակիորեն ՍԾՉ-ի քաղաքականության համար նշանակված համակարգողին կամ ԿՌԿ-ի կողմից ստեղծված այլ գաղտնի հաղորդման ուղիներով: ԿՌԿ-ն խրախուսում է մշակույթ, որտեղ բոլոր աշխատակիցները և փոխկապակցված անձինք իրենց լիազորված են զգում հաղորդել ՍԾՉ-ի վերաբերյալ մտահոգությունների մասին՝ առանց վրիժառության վախի:

Քայլ 2. Տեղեկացնել ՍԾՉ-ի համար նշանակված համակարգողին

Հաղորդումն անմիջապես փոխանցվում է ՍԾՉ-ի համար նշանակված համակարգողին: Այս պաշտոնատար անձը պատասխանատու է նախնական կապի, տեղեկատվության նախնական հավաքագրման և վերապրածին կամ ներգրավված այլ անձանց անմիջական ռիսկերի գնահատման համար: Պաշտոնատար անձը քայլեր կձեռնարկի բոլոր կողմերի անմիջական անվտանգությունն ապահովելու համար՝ միաժամանակ պահպանելով գաղտնիության սկզբունքները:

Քայլ 3. Ռիսկերի գնահատում

ՍԾՉ-ի համար նշանակված պաշտոնատար անձը կկատարի ռիսկերի գնահատում՝ դեպքի լրջությունը որոշելու համար: Սա ներառում է գնահատում, թե արդյոք դեպքը պետք է փոխանցվի արտաքին մարմիններին (օրինակ՝ իրավապահ մարմիններին կամ երեխաների պաշտպանության գործակալություններին), թե այն կարող է մշակվել ներքին կարգով ԿՌԿ-ի կողմից: Գնահատումը հաշվի է առնում վերապրածի համար ռիսկի

մակարդակը, պաշտպանության անհրաժեշտությունը և դեպքի կրկնվելու հավանականությունը:

Քայլ 4. Գաղտնի հետաքննություն

Եթե գործը շարունակվում է ներքին կարգով, ապա սկսվում է գաղտնիության պահպանմամբ հետաքննություն՝ հետևելով ԿՌԿ-ի ՍԾՉ-ի ուղեցույցներին: Հետաքննությունը կատարվում է վերապատրաստված անձնակազմի կողմից և կենտրոնացած է փաստերի բացահայտման վրա՝ միաժամանակ պահպանելով խիստ գաղտնիություն: Այս գործընթացում տուժածի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը գերակշռում է, և հավաքագրված ցանկացած տեղեկատվություն մշակվում է զգուշությամբ՝ անտեղի բացահայտումից խուսափելու համար:

Քայլ 5. Աջակցություն և հետևողականություն

Հետաքննությունից հետո ԿՌԿ-ն վերապրած անձին տրամադրում է համապարփակ աջակցության ծառայություններ, որոնք կարող են ներառել հոգեբանական խորհրդատվություն, իրավական և սոցիալական աջակցություն: Իրականացվում է հետագա մոնիթորինգ՝ ապահովելու վերապրածի բարեկեցությունը և հետագա ռիսկերը կառավարելու համար: Այս շարունակական աջակցությունը օգնում է հասցեագրել վերապրածների երկարաժամկետ կարիքները և վերահաստատում նրանց համար, որ ԿՌԿ-ն հանձնառու է պաշտպանել իրենց անվտանգությունը:

8. ԿՌԿ-ի աշխատակազմի և գործընկերների պատասխանատվությունները

- **Քաղաքականության պահպանումը.** բոլոր աշխատակիցներից և գործընկերներից ակնկալվում է, որ նրանք միշտ պահպանեն սույն ՍԾՉ-ի քաղաքականությանը՝ ինչպես աշխատանքային ժամերին, այնպես էլ դրանցից դուրս: Նրանք պատասխանատու են.
    - Ցանկացած ՍԾՉ-ի մասին հաղորդելու համար, որոնց ականատես են լինում կամ կասկածում են, անկախ նրանից՝ դա ներառում է ԿՌԿ-ի անձնակազմին, գործընկերներին թե շահառուներին,
    - ՍԾՉ-ի կանխարգելման համար՝ գործելով այնպես, որ խթանեն հարգանքն ու հավասարությանը,
    - Գործընկերներին աջակցելու համար՝ այս քաղաքականությունը հասկանալու և իրականացնելու հարցում:
- **ՍԾՉ-ի համար նշանակված պաշտոնատար անձ.** ԿՌԿ-ն նշանակում է հատուկ ՍԾՉ-ի պաշտոնատար անձ, որը պատասխանատու է քաղաքականության իրականացումը վերահսկելու, բողոքները քննելու և համապատասխան մարմինների հետ գործընթացները համակարգելու համար:

9. Մոնիթորինգ և գնահատում

- **ԿՌԿ-ն պարբերաբար կհետևի** այս քաղաքականության իրականացմանը և կգնահատի իր կանխարգելման և արձագանքման միջոցառումների

արդյունավետությունը: Սա կներառի ՍԾՉ-ի հաղորդումների քանակի, հետաքննությունների արդյունքի և աշխատակազմի իրազեկության և քաղաքականությանը հետևելու մակարդակի ուսումնասիրությունը:

- **Կանոնավոր աուդիտներ և վերանայումներ.** պարբերաբար աուդիտներ և վերանայումներ կանցկացվեն այս քաղաքականությանը հետամուտ լինելն ապահովելու համար: Աուդիտի արդյունքները տեղեկատվություն կտրամադրեն քաղաքականության և ընթացակարգերի անհրաժեշտ թարմացման կամ բարելավման մասին:

10. Քաղաքականության վերանայում և թարմացում

- Սույն ՍԾՉ-ի քաղաքականությունը կվերանայվի և կթարմացվի տարեկան կտրվածքով կամ ըստ անհրաժեշտության՝ ապահովելու, որ այն մնա արդիական, արդյունավետ և համապատասխանի ներպետական և միջազգային չափանիշներին ու լավագույն փորձին:

Ընդունում

Ստորագրելով սույն քաղաքականությունը՝ աշխատակիցները, կամավորները, դասընթացավարները, վերապատրաստման մասնակիցները և գործընկերները ընդունում են, որ ծանոթացել են ՍԾՉ-ի քաղաքականությանը, հասկանում են այն և համաձայնում են պահպանել վերջինիս դրույթներն ու պարտավորությունները: